դրանով վերջացրել, բայց հաջորդ քարի վրա յ գրի մնացորդը ցույց է տալիս, որ ուրիշ բառ է եղել այդտեղ։ Պարզ չէ, Ջալալյանի ժամանակ քարն արդեն ընկած է եղել և Սարգսի բառն ինքը ենթադրաբար է վերականգնել, թե քարն եղել է, բայց ինքն, ըստ սովորության շարունակությունը կարևոր չհամարելով, չի ընդօրինակել։

127. Գրատան նախագավթի եվ Ս̅ծածրին եկեղեցու միջեվ ընկած պատին

(Լուս. № 80)

Հ ՈՁԳ *Մ 1234*

Հրատարակված է՝ Ջալ 33, Դրիմ 56, Վիմ 55—56



Նկ. 80. Արձ. № 127։

1 *Ի թվին ՈՁԳ։*
2 *Ես՝ Աբրահամ վարդապետ, աշակերտ Ս̅ծած-*
3 *նիս, ետու յՍ̅ծածինս զիմ թագաւորական եւ*
4 *զ̅տրունական ս̅բ նշանս մեծածախ պահարանով եւ զիմ*
5 *մատենարկն, որ բազում աշխատութ̅բ շինեցի՝ ի գրատունս։ Ը-*
6 *նգալա ես Գրիգոր վարդապետ, առաջնորդ Սանահնիս, ամէն*